ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՏԱՆՁՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ТАНДЗУТСКИЙ МУНИЦИПОЛИТЕТ

թիվ 36

29 ապրիլի 2013թ

Արմավիրի մարզպետ
պարոն Ա.Պահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 23-ի թիվ 3 նիստի որոշումները :

Առդիր 20 թերթ:

Տանձուտ համայնքի
ղեկավար Մ.Պետրոսյան

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Մուտք թիվ 4002-13
«30» 04 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

23ապրիլի2013թ. թիվ 12

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

որոշեց՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի ավագանու 2013թվականի ապրիլի 22-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Տիգրան Սարգսյան			
Հայկ Գրիգորյան			
Լևոն Թադևոսյան			
Արմեն Խաչատրյան			
Գեղամ Պողոսյան			

համայնքի ղեկավարի ժ/պ Մ. Միքայելյան

2013թվական
ապրիլի 23
գ. Տանձուտ

Հավելված
«Արմավիրի մարզի
Տանձուտ գյուղական համայնքի
ավագանու 2013թվականի մարտի 23-ի
թիվ 12 որոշման

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1.Օրակարգը հաստատելու մասին

/զեկ. Մ. Միքայելյան/

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտի գյուղապետարանի Ա շխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին

/զեկ. Մ. Միքայելյան/

3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի ներտնտեսային ջրանցքների ներդրումային ծրագրերի համաֆինանսավորման պայմանով իրականացման մասին

/զեկ. Մ. Միքայելյան/

4.Դրամական օգնություն տալու մասին

/զեկ. Մ. Միքայելյան/

5. Դրամական օգնություն տալու մասին

/զեկ. Մ. Միքայելյան/

6.Գումար հատկացնելու մասին

/զեկ. Մ. Միքայելյան/

7.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի ավագանու 2012թվականի նոյեմբերի 29-ի թիվ 7-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/զեկ. Մ. Միքայելյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2013թ. թիվ 13

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2013թվականի մարտի 15-ի թիվ 01/07.1/965-13 գրությունը

ավագանին որոշեց՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին իրականացնելու սույն որոշումից բխող իրավական գործողություններ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Տիգրան Սարգսյան			
Հայկ Գրիգորյան			
Լևոն Թադևոսյան			
Արմեն Խաչատրյան			
Գեղամ Պողոսյան			

Համայնքի ղեկավար՝ Մ. Միքայելյան

2013թվական
ապրիլի 23
գ. Տանձուտ

Հաստատված
Հայաստանի Հանրապետության Արմավիր
մարզի Տանձուտի գյուղական համայնքի
ավագանու 2018 թվականի ապրիլի 22-ի
N 3 հերթական նիստի N 18 որոշման

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտի / այսուհետև՝ համայնք/ գյուղապետարանի աշխատակազմը / այսուհետև՝ Աշխատակազմ/ իրավաբանական կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որի միջոցով համայնքի ղեկավարը օրենքով ու համայնքի ավագանու / այսուհետև՝ ավագանի/ կանոնակարգով նախատեսված դեպքերում նաև ավագանին կազմակերպում են իրենց գործունեությունը:

2.Աշխատակազմն իր գործունեությունն իրականացնում է համայնքային ծառայողների, ինչպես նաև անձնակազմի լիազորությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց միջոցով:
Աշխատակազմում իրականացվում է համայնքային ծառայություն, որը կարգավորվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

3. Ավագանին և համայնքի ղեկավարն Աշխատակազմի միջոցով համայնքում իրականացնում են օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունները, համակարգում համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը, կազմակերպում հանրապետական գործադիր մարմինների և դրանց համապատասխան տարածքային ծառայությունների հետ հարաբերությունները:

4.Աշխատակազմը ստեղծվում, վերակազմավորվում և նրա գործունեությունը դադարեցվում է ավագանու որոշմամբ:

5.Աշխատակազմի լիազորությունները սահմանվում են օրենքներով, այլ իրավական ակտերով, այդ թվում՝ ավագանու որոշումներով, համայնքի ղեկավարի որոշումներով ու կարգադրություններով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:

6.Աշխատակազմը գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի, սույն կանոնադրության հիման վրա:

7.Աշխատակազմը կարող է կազմված լինել կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներից: Աշխատակազմի համակարգում ընդգրկվում են համայնքի ենթակայության հիմնարկներ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ:

8.Աշխատակազմի նպատակն ու խնդիրը ավագանու և համայնքի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին համայնքի ղեկավարի մասնակցության ապահովումն է:

9.Աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում համայնքը:

10.Աշխատակազմ ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ, այլ անհատականացման միջոցներ:

11.Աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:
12.Աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող են գանձվել տեղական տուրքեր և վճարներ՝ օրենքով սահմանված չափով և կարգով:
13.Աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով:
14.Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանման կողմից:
15.Աշխատակազմի լրիվ անվանումն է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտի գյուղապետարանի աշխատակազմ»համայնքային կառավարչական հիմնարկ:
16.Աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ գյուղ Տանձուտ 1 փողոց 38 շենք:

2.ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

17.Աշխատակազմի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ օրենքով, այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում:
18.Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է Աշխատակազմի մասնագետների, համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով;
19.Համայնքի ղեկավարը՝
1/ աշխատակազմի / այդ թվում առանձնացված ստորաբաժանումների/ ինչպես նաև բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների,կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագծերը և դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը.
2/օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններում, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժ միջոցներ.
3/օրենքով սահմանված դեպքերում շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության դասային աստիճաններ,զրկում է դասային աստիճանից.
4/ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ նշանակումներ է կատարում հայեցողական պաշտոններում.
5/իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ ,օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:
20.Համայնքի ղեկավարի տեղակալը՝
1/համակարգում է համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատանքները՝ համայնքի ղեկավարի կողմից իրեն հանձնարարված բնագավառներում.
2/Աշխատակազմի նպատակներին ու խնդիրներին համապատասխան սահմանում է հանձնարարված բնագավառների՝ Աշխատակազմի ստորաբաժանումներին տրվող հանձնարարականները և առաջադրանքները, իրականացնում դրանց նկատմամբ վերահսկողություն.
3/համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է ավագանու և համայնքի ղեկավարի քննարկվելիք հարցերի նախնական քննարկումներ.
4/համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում Աշխատակազմի, ստորաբաժանումների, ինչպես նաև համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.

5/իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների և հիմնարկների հետ.
6/իրեն հանձնարարված բնագավառներում հայմակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.
7/պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն իր կողմից վերահսկվող բնագավառներում տիրող վիճակի մասին.
8/ապահովում է իր կողմից հանձնարարված բնագավառներում ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների ու կարգադրությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն ու արդյունքների մասին տեղեկացնում համայնքի ղեկավարին.
9/համայնքի ղեկավարին ու Աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է առաջարկություններ վերջիններիս իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ.
10/ համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:
Համայնքի ղեկավարի տեղակալը փոխարինում է համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ:
21.Համայնքի ղեկավարի տեղակալին պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:
22.Համայնքի ղեկավարն կարող է ունենալ խորհրդական, օգնական, որոնց միջև պարտականությունների բաշխումը կատարում է համայնքի ղեկավարը: Համայնքի ղեկավարի խորհրդականին և օգնականին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:
23.Համայնքի ղեկավարի խորհրդականը՝
1/համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ՝ կազմում է իր աշխատանքային ծրագրերը.
2/ պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում զեկուցումներ, անհրաժեշտ վերլուծական նյութեր իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի, երևույթների և իրադարձությունների մասին և առաջարկություններ առկա հիմնահարցերի լուծման վերաբերյալ.
3/ կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն.
4/ համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում՝ իրեն հանձնարարված բնագավառներին վերաբերվող հարցերի քննարկմանը.
5/ համայնքի ղեկավարի հանձնարարությամբ հրավիրում է խորհրդակցություններ, կազմակերպում իրեն հանձնարարված հարցերի քննարկումներ.
6/ կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:
24.Համայնքի ղեկավարի օգնականը՝
1/ կազմակերպական, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում համայնքի ղեկավարին.
2/ համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ՝ կազմակերպում է համայնքի ղեկավարի ընթացիկ և հեռանկարային աշխատանքների ծրագրերի նախապատրաստումը և դրանք ներկայացնում համայնքի ղեկավարին.
3/ կազմակերպում է համայնքի ղեկավարի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի և ուղևորությունների նախապատրաստումը.
4/ համագործակցելով Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների հետ՝ համայնքի ղեկավարի համար նախապատրաստում է տեղեկատվական և վերլուծական նյութեր.
5/ նախապատրաստում և համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություններ աշխատանքային ծրագրերի վերաբերյալ.
6/ կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:
25.Ավագանին՝
1/ վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ.
2/ որոշում է Աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.

3/ հաստատում է Աշխատակազմի կանոնադրությունը, կառուցվածքը ,հաստիքացուցակը և աշխատակիցների թվաքանակը.
4/ սահմանում է համայնքի ղեկավարի, նրա տեղակալի, խորհրդականի, օգնականի,Աշխատակազմի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը.
5/ օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային բյուջետային հիմնարկների,համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.
6/ օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.
7/ սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.
8/ համայքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, հաստատում է դրանց վարձավճարների և օտարման գների չափերը և պայմանները, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գները.
9/ իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ:
26. Աշխատակազմի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է աշխատակազմի քարտուղարը:
27. Աշխատակազմի քարտուղարը՝
1/ օրենքով, այլ իրավական ակտերով, համայնքի ղեկավարի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում և կազմակերպում է Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն Օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.
2/իր իրավասության շրջանակներում իրականացնում է Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատանքների համակարգումը.
3/ վերահսկողություն է իրականացնում ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների կատարման,ինչպես նաև Աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ.
4/ մշակում և համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում Աշխատակազմի աշխատանքային տարեկան և երկամյակային ծրագրերը, վերահսկողություն է իրականացնում դրանց կատարման նկատմամբ, արդյունքների մասին զեկուցում համայնքի ղեկավարին.
5/ ապահովում է համայնքի բյուջետային միջոցներից ծախսերի կատարումը.
6/ կազմակերպում է համայնքի բնակիչների ընդունելությունը, նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների սահմանված կարգով քննարկումը, ինչպես նաև Աշխատակազմի գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները.
7/ համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում Աշխատակազմի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, այդ թվում ապահովում է Աշխատակազմի հաշվապահական հաշվառումը վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելն ու ներկայացնելը, ինչպես նաև Աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, միջոցներ է ձեռնարկում ստուգումների արդյունքում հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար.
8/ համայնքի ղեկավարի ստորագրությանն է ներկայացնում համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների նախագծերը.

9/ ապահովում է Աշխատակազմում համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այդ իրավական ակտերի համապատասխան անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը.

10/ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններում, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

11/ օրենքով սահմանված դեպքերում շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության դասային աստիճաններ,զրկում համայնքային ծառայության դասային աստիճաններից.

12/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է Աշխատակազմի տեխնիկական սպասարկման սպասարկում իրականացնող անձանց, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

13/օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ենթակա ցուցումներ.

14/իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

28.Աշխատակազմի քարտուղարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինելու հարցը կարգավորվում է համայնքային ծառայության մասին ՀայաստանՀանրապետության օրենսդրությամբ :

3.ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

29.Աշխատակազմի գույքը ձևավորվում է համայնքի սեփականությանը փոխանցված և /կամ/ համարվող գույքից, որը Աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանը և օգտագործմանը հանձնվում է / ամրացվում է/ ավագանու համապատասխան որոշմամբ: Աշխատակազմի գույքը ենթակա է հաշվառման նրա հաշվեկշռում:

30.Աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրեն հանձնված գույքը:

4.ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

31.Համայնքի ղեկավարն իր պաշտոնը ստանձնելու օրվանից ոչ ուշ քան մեկ ամսվա ընթացքում մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում Աշխատակազմի, ինչպես նաև համայնքային բյուջետային հիմնարկների կանոնադրությունները , ինչպես նաև աշխատակիցների քանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:Աշխատակազմի կառուցվածքում կարող են նախատեսվել միայն «բաժին» տեսակի կառուցվածքային և / կամ/ առանձնացված ստորաբաժանումներ, որոնց հաստիքային միավորների թվաքանակը սահմանում է պետական լիազոր մարմինը:

32.Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներն ինչպես նաև բյուջետային հիմնարկները և ոչ առևտրային կազմակերպություններն ունեն կանոնադրություններ, որոնք համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում են համայնքի ավագանու կողմից:

5.ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

33.Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների, վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

34. Աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի / վերստուգման / Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

35.Աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23ապրիլի 2013թ. թիվ 14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՋՐԱՆՑՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ավագանին որոշում է՝

1.Մասնակցել ներտնտեսային ջրանցքների վերականգնման ներդրումային ծրագրին՝ շինարարական աշխատանքների 15% համաֆինանսավորման պայմանով:

2.Հաստատել ներկայացված միջտնտեսային ջրանցքից 700մետր նոր բաժանարարի կառուցումը:

3.Առաջարկել <Մերձափնյա> ՋՕԸ-ի տնօրինությանը՝ առաջնահերթ քննարկել ներդրումային ծրագրի շրջանակներում <Մերձափնյա> ՋՕԸ-ի սպասարկման Տանձուտ համայնքի միջտնտեսային ջրանցքից 700մետր նոր բաժանարարի կառուցման հարցը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ կողմ դեմ ձեռնպահ

Տիգրան Սարգսյան
Հայկ Գրիգորյան
Լևոն Թադևոսյան
Արմեն Խաչատրյան
Գեղամ Պողոսյան

Համայնքի ղեկավարի ժպ Մ. Պետրոսյան

2013թվական
ապրիլի 23
գ. Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

23ապրիլի2013թ. թիվ 15

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

որոշեց՝

1.Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ կողմ դեմ ձեռնպահ

Արմեն Խաչատրյան

Հայկ Գրիգորյան

Տիգրան Սարգսյան

Լևոն Թադևոսյան

Գեղամ Պողոսյան

Համայնքի ղեկավարի մ/պ Մ. Միքայելյան

2013թվական
ապրիլի 23
գ.Տանձուտ

Հավելված
ՀՀ Վրաստանի դեմ
ծաղծուն գործողության մասնակցի
ավագանու 2013թվականի 23-ի
թիվ 15որոշման

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացված դրամական օգնություն

1.Վարդանյան Էմմա Նահապետի	40000դրամ
2.Գրիգորյան Նոյեմզար Հերբերտի	40000դրամ
3.Խաչատրյան Փառանձեմ Ծերունի	40000 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

23ապրիլի2013թ. թիվ 16

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

որոշեց՝

1.Պատերազմի վետերանի, արցախի ազատամարտի մասնակիցներին հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Արմեն Խաչատրյան			
Հայկ Գրիգորյան			
Տիգրան Սարգսյան			
Լևոն Թադևոսյան			
Գեղամ Պողոսյան			

Համայնքի ղեկավար՝ Մ. Միքայելյան

2013թվական
ապրիլի 23
գ.Տանձուտ

Պատերազմի վետերանի, արցախի ազատամարտի մասնակիցներին
հատկացված դրամական օգնություն

1.Այվազյան Փաշո Ամրաստանի -վետերան- 20000դրամ
2.Գրիգորյան Վարդան Գեներիկի -ազատամարտիկ-10000դրամ
3.Մկրտումյան Սամվել Էդիկի -ազատամարտիկ- 10000դրամ
4.Գրիգորյան Ռոլանդ Թելմանի -ազատամարտիկ-10000դրամ
5.Խաչատրյան Եփրեմ Երեմի -ազատամարտիկ-10000դրամ
6.Խաչատրյան Աշոտ Սոսի -ազատամարտիկ- 10000դրամ
7.Գրիգորյան Գրիշա Միշայի -ազատամարտիկ-10000դրամ
8.Մխիթարյան Աբրահամ Կոլյայի -ազատամարտիկ-10000դրամ
9.Վիրաբյան Սարգիս Սուրենի -ազատամարտիկ-10000դրամ
10.Գրիգորյան Մկրտիչ Գրիգորի -ազատամարտիկ-10000դրամ
11.Մկրտումյան Խաչիկ Արամի -ազատամարտիկ-10000դրամ
12.Արշակյան Ժենյա Գևորգի զոհված ազատամարտիկի մայր- 10000դրամ
13.Հակոբյան Կարինա Յակովի ազատամարտիկի այրի -10000դրամ
14.Հարությունյան Օֆելյա Հայկազի ազատամարտիկ /բուժ.քույր/ -10000դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

23ապրիլի 2013թ, թիվ 17

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

որոշեց՝

1.Մայիսի 9-ի՝ Հաղթանակի և խաղաղության տոնի միջոցառման կազմակերպման համար հատկացնել 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ կողմ դեմ ձեռնպահ

Արմեն Խաչատրյան

Հայկ Գրիգորյան

Լևոն Թադևոսյան

Գեղամ Պողոսյան

Տիգրան Սարգսյան

Համայնքի ղեկավար Մ. Պետրոսյան

2013թվական
ապրիլ 23
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՍԱԿԻՈՒՄ ՍԱՐՅԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

Հունվարի 2013թ. թիվ 18-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՍԱԿԻՈՒՄ ՍԱՐՅԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 6-րդ մասով

Ավագանին որոշում

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Տանձուտ գյուղական համայնքի համայնքապետարանի 2012թվականի նոյեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Տանձուտ գյուղական համայնքի վարչական սահմանները հաստատելու, Տանձուտ գյուղական համայնքի տեղական ժողովրդական դատարանի և վճռարկուների դրությունը հաստատելու մասին» թիվ 73-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն կցվող տարբերակի:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն օրվանից հետո տասնհինգերորդ օրը:

Խորհրդի անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Տիգրան Սարգսյան			
Հայկ Գրիգորյան			
Լևոն Խաչատրյան			
Արմեն Հովհաննիսյան			
Գեորգի Գրիգորյան			

Համայնքի գլխավոր քարտուղար՝ Ս. Մարգարյան

2013թվականի
հունվարի 23
գ. Տանձուտ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական
համայնքի ավագանու 2012 թվականի
նոյեմբերի 29-ի N 7-Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝

1/ մինչև 300 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում՝ այգեգործական / ամառանոցային / տների, ինչպես նաև 200 քմ. ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ

2/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա.201-ից մինչև 500 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների հա մար 6000 /վեց հազար/ դրամ

բ. 501-ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 7000 /յոթ հազար/դրամ

գ.1001-ից մինչև 3000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 / երեսունհինգ հազար/ դրամ

դ.3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանու մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 50000 / հիսուն հազար/ դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3/ մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1000 /հազար/ դրամ

4/ 20 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2000 /երկու հազար/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման, արդիականացման աշխատանքների / բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցներ /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն՝ 500 /հինգ հարյուր / դրամ

2/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի /ա/ ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարության կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել 2000դրամ /երկու հազար/:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1/ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 4000 /չորս հազար/

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 4000 /չորս հազար/դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ /երեք հարյուր հիսուն /՝ մեկ քառակուսի մետրի համար

2/ հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

ա.հեղուկ վառելիքի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար 150000դրամ

բ.սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար 200000դրամ

3/համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա.հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 6000դրամ
բ.ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝1000դրամ
6.Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000դրամ

7.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի անվանումը օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 70000դրամ:

8. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ /հիսուն հազար/:

9.Համայնքի տարածքում՝ առևտրի ,հանրային սննդի,զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները , բաղնիքները /սաունաներ/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1/ առևտրի օբյեկտների համար 35000 /երեսուն հինգ հազար/ դրամ
2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 60000/վաթսուն հազար/դրամ
3/ վիճակախաղերի կազմակերպման համար 120000 /մեկ հարյուր քսան հազար/ դրամ

4/ բաղնիքների /սաունաների / համար՝150000/մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ
5/ խաղատների կազմակերպման համար՝300000 /երեք հարյուր հազար/ դրամ
6/ շահումով խաղերի կազմակերպման համար՝300000 /երեք հարյուր հազար/ դրամ:

10. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1ք.մ. տեղական տուրք սահմանել՝

1/ծխախոտի արտաքին գովազդի համար 2000/երկու հազար/ դրամ
2/ այլ արտաքին գովազդի համար 1000 /մեկ հազար/ դրամ
3/ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2000/երկու հազար/ դրամ
4/ թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2500դրամ /երկու հազար հինգ հարյուր/
5/դատարկ գովազդային վահանակների համար 700 / յոթ հարյուր /դրամ

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար 1000/ մեկ հազար/ դրամ:

12.Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ:

13.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցների վճար 1000 /մեկ հազար /դրամ:

14.Համայնքի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու ,հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցված ծառայությունների դիմաց վճար սահմանել 1000/մեկ հազար/դրամ:

15. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխվող վերակառուցման աշխատանքները կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու , ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000/երեք հազար / դրամ:>>: